ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

ք.Եղեգնաձոր

N 92 <<15>> դեկտեմբերի 2014թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՉԻՎԱՅԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 145-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 7-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի և Հայաստանի Հանրապետության Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2014 թվականի հոկտեմբերի 28-ի թիվ 27-Ա որոշման պահանջներով

Որոշում եմ՝

1.Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Չիվայի գյուղական համայնքում տեղական ինքնակառավարման մարմինների հերթական ընտրությունները նշանակել Հայաստանի Հանրապետության Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2014 թվականի հոկտեմբերի 28-ի թիվ 27-Ա որոշմամբ սահմանված 2015 թվականի մարտի 15-ի կիրակի օրը՝ համաձայն սույն որոշման հավելվածի:

2.Առաջարկել մարզի նորընտիր տեղական ինքնակառավարման մարմիններին՝ լիազորությունները ստանձնել սույն որոշման հավելվածում սահմանված ժամկետներում :

3.Հանձնարարել մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչությանը ընտրությունից հետո ընդունված որոշման մասին ծանուցել համայնքի նորընտիր տեղական ինքնակառավարման մարմիններին:

4.Որոշման կատարման հսկողությունը դնել մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության վրա :

5.Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից :

Հ.ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված
ՀՀ Վայոց ձորի մարզպետի
2014 թվականի դեկտեմբերի 15-ի թիվ 92 որոշման

ՀՀ Վայոց ձորի մարզի Չիվայի գյուղական համայնքում 2015 թվականի մարտի 15-ին տեղական ինքնակառավարման մարմինների կայանալիք ընտրությունների վերաբերյալ

հհ	Համայնքի անվանումը	Ընտրողների թիվը	ՏԻՄ-երի լիազորությունների ստանձման ժամկետները	
			Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
1	Չիվա	817	29.06.2015թ.	Ընտրություն չկա

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ Կ.ՍԱՀԱԿՅԱՆ